հանձնաժողովի վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը, որը գործի քննության ընթացքում չի ապացուցել: Հետևաբար, հակառակն ապացուցված չլինելու պայմաններում գործում է այն կանխավարկածը, որ սույն գործով Հայցվորի կողմից վկայակոչված փաստերը պետք է Դատարանի պատճառաբանություններով և կատարված եզրահանգումների մասերով ճանաչել հաստատված, որը հանգեցնում է հայցի բավարարմանը, որպիսի պայմաններում Դատարանը հանգում է այն եզրակացության, որ Արթիկի համայնքապետարանի ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի 08.04.2023թ. թիվ 2 արձանագրությամբ <<Վահրամ Կնյազյան>> Ա/Ձ հայտը Չափաբաժին 1-ինով և Չափաբաժին 2-րդով բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները ենթակա են անվավեր ճանաչման:

3. <u>Դատական ծախսերի վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծությունները.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 20 400.00 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՏԵԽ.ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1>> ՍՊԸ-ի ընդդեմ Արթիկի համայնքապետարանի՝ ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի

գնահատող հանձնաժողովի 08.04.2023թ. թիվ 2 արձանագրությամբ <<Վահրամ Կնյազյան>> Ա/Ձ հայտը Չափաբաժին 1-ինով և Չափաբաժին 2-րդով բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի 08.04.2023թ. թիվ 2 արձանագրությամբ <<Վահրամ Կնյազյան>> Ա/Ձ հայտը Չափաբաժին 1-ինով և Չափաբաժին 2-րդով բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Արթիկի համայնքապետարանից հօգուտ <<ՏԵԽ.ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1>> ՍՊԸ-ի բռնագանձել 20 400.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. **Վճռի <<Եզրափակիչ>> մասի 1.1. և 2. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN
4014820192
Date: 2023.07.26 12:57:19 AMT

Ա. ՕՀԱՆՅԱՆ